

## Մի թե միայն օրենքով...

Հաճախ կյանքը մեզ գցում է բարդ իրավիճակների մեջ, երբ մի կողմից, պետք է հետևել օրենքի «տառին ու ոգուն», իսկ մյուս կողմից, «խաղասեղանին» է դրվում մարդու գոյությունը:

Հարցի էությունը հետևյալն է. միայնակ թոշակառու կինը, որի եկամտի միակ աղբյուրը կենսաթոշակն է (ընդամենը 24500 դրամ), սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով ժամանակին ջրաչափ չի տեղադրել իր բնակարանում: Հաշվի առնելով նրա պարբերական բացակայությունները հիմնական բնակության վայրից (երկարատև բուժում՝ առողջական խնդիրների պատճառով), նա կարծել է, որ չապրելով իր բնակարանում և չօգտվելով ջրամատակարարմից ու կոմունալ ծառայություններից, դրանց համար չի վճարելու: Սակայն, ըստ գործող օրենսդրության, էլնելով բազմաբնակարան շենքում տեղադրված ընդհանուր ջրաչափի ցուցմունքից, նրա հաշվին պարտքեր են կուտակվել օգտագործված ջրի և կոմունալ մյուս ծառայությունների համար:

«Երևան Ջուր» ընկերությունը դատի է տվել թոշակառու կնոջը և շահել դատը (առանց պատասխանողի մասնակցության): Դատարանի որոշմամբ թոշակառուի պարտքը կազմել է 538275 դրամ: Ի վերջո, նա պարտավոր է իր 24500 դրամ կազմող թոշակից ամեն ամիս հօգուտ Ընկերության և պետության վճարել 7300 դրամ:

Փորձեր են արվել հանրային պաշտպանի միջոցով բողոքարկել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, սակայն ապարդյուն:

Հանուն արդարության պետք է նշել, որ «Երևան Ջուր» ընկերության և դատական համակարգի գործողությունները համապատասխանում են օրենքի «տառին ու ոգուն», սակայն ինչ անել որոշակի անբավարարվածության զգացման հետ, երբ պետական իշխանության ամբողջ համակարգը միայնակ թոշակառու կնոջը դատապարտում է, լավագույն դեպքում, մուրացկանության, իսկ վատագույն դեպքում՝ սովամահության:

Եթե հաշվի առնենք, որ մեր թոշակառուն ստիպված է իր մնացած 17200 դրամից վճարել նաև էլեկտրաէներգիայի և կոմունալ ծառայությունների դիմաց, ապա կարող ենք վստահաբար ասել, որ ամենախիստ տնտեսման պայմաններում նրա գումարը չի բավականացնի նույնիսկ հաց գնելուն:

Մեր թոշակառուն բազմիցս դիմել է տարբեր ատյաններ, խնդրելով՝ գոնե նվազեցնել պարտքային կախվածությունը: Միայն Երևանի քաղաքապետարանն է նրան միանվագ օգնություն տրամադրել 71732 դրամ գումարի չափով, իսկ «Երևան Ջուր» ընկերությունը համառորեն պահանջում է կատարել դատարանի որոշումը:

Կարելի է հասկանալ «Երևան Ջուր» ընկերությանը, նա բոլոր հիմքերն ունի մեր թոշակառուին դիտելու որպես «ներհամակարգային կորուստների» աղբյուր, սակայն ինձ, որպես սովորական քաղաքացու հետաքրքրում է հետևյալ հարցը. «Արդյոք բոլոր սրճարանները, ռեստորանները, այսպես կոչված «սննդի օբյեկտները», ավտովազման կետերը, ծաղկի խանութները և «Երևան Ջուր» ընկերության այլ հաճախորդները, ինչպես նաև ներհամակարգային կորուստների կրճատման համար պատասխանատուները վճարո՞ւմ են ըստ ջրաչափի ցուցմունքների՝ բնության այս բարիքն օգտագործելու և դրա «կորուստների» համար»:

Մի՞ թե «սպիտակ օձիքավորներին», ինչպես չինովնիկներին, այնպես էլ ֆեմիդայի ծառայողներին, խորթ Է կարեկցանքի զգացումը մերձավորի՝ միայնակ ազգակցի հանդեպ, ում նկատմամբ կիրառվելու է Օրենքի խիստ պահանջը:

Կրկնում եմ՝ ամեն ինչ արվել է Օրենքի շրջանակներում, սակայն ի՞նչպես վարվել մարդկայնության հետ:

Մի՞ թե, մեզ համար «մարդկայնություն» հասկացությունը կորցրել է իր իմաստը:

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն